«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**18.04.2025թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Արարատի Արաքս ՖԱ»**
Առաջնություն՝	**ՍՖԱ Բ լիգա 2024/25-Բ խումբ**
Խաղ՝	**«Արարատի Արաքս-2» - «Աչաջուր գ/պ», 13.04.2025թ.**
Վարույթ՝	**ՍՖԱԲ Բ-024**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՍՖԱԲ Բ-024 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից 2025 թվականի ապրիլի 17-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն և ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով (2024թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Արարատի Արաքս ՖԱ»
Էլեկտրոնային փոստի հասցե՝ araratiaraqs@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17.04.2025թ.

Զեկուցող (անդամ)	Նարեկ Ադամյան
Անդամներ	Արփի Նազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ՍՖԱԲ Բ-024
Խախտում՝	«Արարատի Արաքս-2» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Խանդամիրյանի (14210) բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Ծ, 11-րդ կետ)
Առաջնություն՝	ՍՖԱ Բ լիգա 2024/25-Բ խումբ
Խաղ՝	«Արարատի Արաքս-2» - «Աչաջուր գ/պ», 13.04.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

«Արարատի Արաքս-2» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Խանդամիրյանին (14210) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի ապրիլի 13-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստը նախագահող՝

Նարեկ Ադամյան

Digitally signed by
ADAMYAN NAREK 3214900080
Date: 2025-04-18 19:05:21

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:

- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։